



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՀԱՆՎՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: info@westernprelacy.org Website: www.westernprelacy.org



GLENDALE MEMORIAL HOSPITAL ԱՅՅԵԼՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ

ԲԺՇԿՈՒԹԻՒՆԸ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆ Է ԵՒ ԿՈՉՈՒՄ

ՅԱՅՏԱՐԱՐԵՑ ՎԵՅԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ

«Այստեղ ենք, յարգանք մատուցելու այն աշխատանքին, որ կը կատարուի հիւանդանոցներու մէջ, ի նպաստ մարդոց ֆիզիքական ու հոգեկան առողջութեան պահպանման: Ձեր գործը սոսկական աշխատանք չէ, այլ առաքելութիւն, որ կ'արժեւորուի հաւատարմութեամբ ու յանձնառութեամբ: Այս իմաստով, բժիշկներդ ու հիւանդանոցին մէջ ծառայողներդ նման էք հոգեւորականներուն, որոնց առաքելութիւնը եւս կ'արժեւորուի մարդոց ֆիզիքական ու հոգեկան բժշկութեամբ», յայտարարեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս, խօսքը ուղղելով Կլենտէյլի Memorial Hospitalի պատասխանատուներուն ու անձնակազմի ներկայացուցիչներուն, հիւանդանոց իր այցելութեան առիթով:

Նորին Ս. Օծութեան Կլենտէյլի հիւանդանոցը այցելութիւնը տեղի ունեցաւ Ուրբաթ, 7 Յոկտեմբերի առաւօտուն, ընկերակցութեամբ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի, Արեւելեան Թեմի Առաջնորդ Բարձր. Տ. Օշական Արք. Զօլոյեանի եւ գաւազանակիր Յոգշ. Մեսրոպ Վրդ. Սարգիսեանի: Հիւանդանոցի մուտքին, Վեհափառ Հայրապետն ու շքախումբը դիմաւորուեցան հիւանդանոցի վարչութեան նախագահ Մարք Մայրոզի եւ խորհուրդի այլ անդամներու կողմէ: Ներկայ էին հոգեւորականաց դասու եւ Ազգ. Վարչութեան անդամներ, հիւանդանոցի պատասխանատուներ եւ անձնակազմի անդամներ, Կլենտէյլի ոստիկանապետն ու օգնականը, հովուապետական այցելութեան յարաբերական յանձնախումբի անդամներ եւ ազգայիներ:

Վեհափառ Հայրապետն ու ընկերակիցները առաջին հերթին այցելեցին հիւանդանոցի կարգ մը սենեակները, ուր մանուկներ խնամքի ենթակայ են: Ապա, հիւր ու հիւրընկալ խմբուեցան հիւանդանոցի մէկ հիւրասրահը, ուր տեղի ունեցաւ պատշաճ ընդունելութիւն ու հիւրասիրութիւն:

Հիւանդանոցի վարչութեան նախագահը արտասանեց ողջոյնի խօսք մը. ան նկատել տալով, որ Կլենտէյլը հայահոծ քաղաք է, հայ համայնքի

զաւակներ երկար ատենէ ի վեր զօրակից են հիւանդանոցին, իսկ Վեհափառին այցելութիւնը այս իրողութեան ճանաչումը կ'արտայայտէ:

Յովուապետական այցելութեան Յարաբերական Յանձնախումբի ատենապետ Սթիւ Արթինեան, իր կարգին խօսք առնելով, նկատել տուաւ, որ Կլենտէյլի բնակից շուրջ 80,000 հայութեան ու հիւանդանոցին միջեւ յատուկ կապեր զարգացած են: Ան շեշտեց, որ Վեհափառ Յայրապետը 2011 տարին ձօնած է Յայ Մանուկին, հետեւաբար, ան հիւանդանոցին մէջ մանուկներու տուած իր այցելութեամբ ու օրհնութեամբ, կ'ուզէ վեր առնել մանուկներուն հանդէպ հոգածու ըլլալու կարեւորութիւնը: Ան ապա հրաւիրեց Առաջնորդ Սրբազանը, որպէսզի ներկաներուն ներկայացնէ Վեհափառ Յայրապետը:

Առաջնորդ Սրբազանը յայտնեց, թէ ինք մօտէն կը հետեւի այս հիւանդանոցի ծառայական աշխատանքին ու բարձր կը գնահատէ զայն: Ան եւս կանգ առաւ այն իրողութեան առջեւ, որ Վեհափառ Յայրապետը առաջնահերթութեանց կարգին դասած է հիւանդանոց այցելութիւնն ու հիւանդ մանուկներուն օրհնութիւն բաշխելը: Այս մօտեցումով՝ հրաւիրեց Վեհափառը, որպէսզի օրհնէ նաեւ ներկաները եւ հիւանդանոցը:

Վեհափառ Յայրապետը հաստատեց, թէ իր այս այցելութեան նպատակն է գնահատանք արտայայտել հիւանդանոցի ծառայական աշխատանքին, որ առաքելութիւն է ու յանձնառութիւն կը պահանջէ, ինչպէս որ է պարագան եկեղեցւոյ ծառայող հոգեւորականին: «Դուք կը հասնիք մարդոց կարիքներուն, բաւարարութիւն կու տաք ակնկալութեանց, կը հոգաք անոնց ֆիզիքական եւ հոգեբանական պէտքերը. այս աշխատանքը կոչում կ'ենթադրէ, եւ անոր բարիքները կը բաշխուին հաւաքականութեան», ըսաւ Վեհափառ Յայրապետը, միաժամանակ վեր առնելով այն իրողութիւնը, թէ ներկայ աշխարհի տարբեր ասպարեզներուն, ի շարս որոնց՝ բժշկութեան ու հոգեւոր մատակարարութեան պարագային, նախապատուութիւնը կը տրուի կանխարգելիչ միջոցներու. «Մարդը, շարունակեց Վեհափառ Յայրապետը, նիւթական ու հոգեկան տուեալներու ամբողջութիւնն է, անոր հոգածութիւնն ալ պէտք է համապարփակ մօտեցումով կատարուի, իբրեւ հիմնական նպատակ ունենալով մարդկային ընկերութեան կառուցումը»:

Եզրափակելով իր խօսքը, Նորին Ս. Օծութիւնը գոհունակութիւն արտայայտեց այս այցելութեան համար ու վկայեց, թէ այս յարկին տակ մեծ գործ կը կատարուի: Ան յաջողութիւն ու անխափան երթ մաղթեց հիւանդանոցին եւ աղօթք բարձրացուց առ Աստուած, որ օրհնէ այս մարդասիրական հաստատութիւնը:

Խօսքերու փոխանակման աւարտին, Վեհափառ Յայրապետն ու Մարք Մայրոզ յուշանուէրներ փոխանակեցին: Ապա տեղի ունեցաւ պատշաճ հիւրասիրութիւն:

HIS HOLINESS CATHOLICOS ARAM I VISITS GLENDALE MEMORIAL HOSPITAL

On Friday, October 7, H.H. Catholicos Aram I visited Glendale Memorial Hospital where he met with the administration and blessed the patients.

Accompanied by H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, H.E. Archbishop Oshagan Choloyan, Prelate of the Eastern United States, and staff bearer Very Rev. Fr. Mesrob Sarkissian, His Holiness was greeted at the entrance of the hospital by Mr. Mark Meyers, President of Glendale Memorial and Board members. Among those participating in the visit were Clergy members, Executive Council members, hospital board and staff members, Glendale Police Chief, Pontifical Visit committee members, and community members.

His Holiness and entourage first visited a number of rooms in the children's wing and blessed the young patients. A welcoming reception followed.

The reception began with President Mr. Mark Meyers welcoming His Holiness. He stated that the Armenian residents of Glendale have always supported Memorial Hospital, and this visit by His Holiness attests to that support.

Pontifical Visit Public Relations Committee Co-Chair Mr. Steve Artinian, who noted that His Holiness has proclaimed 2011 as the "Year of the Armenian Child", and the Pontiff visiting and blessing the young patients today is an indication of how much of a priority our children are. He then invited the Prelate to introduce His Holiness.

The Prelate noted that he closely follows the endeavors of Glendale Memorial Hospital and highly commends the administration and staff for their service. He also stated that visiting the hospital and blessing the patients was a priority for His Holiness during this Pontifical Visit, and invited the Pontiff to deliver his message.

His Holiness began his message by stating that the purpose of the day's visit was to commend the service of the hospital, saying that "medicine is a mission and a calling" just as it is for clergy members. "You meet people's needs, you meet their expectations, care for them physically and mentally; that is a calling, something that comes from within. In conclusion, His Holiness expressed appreciation for the warm welcome, wished them success in their mission, and prayed for God to bless the hospital, its administration and staff.

After an exchange of gifts between His Holiness and Mr. Meyers, the Pontiff and entourage were hosted to lunch by the administration.